Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/1079/02/19

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

04 հուլիսի 2019 թվական քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ՝ դատավոր Հովհաննես Ղազարյանի

քարտուղարությամբ՝ Ս. Մուրադյանի

մասնակցությամբ՝

հայցվոր Ն. Մեսրոպյանի

հայցվորի ներկայացուցիչ Տ. Ղազարյանի

պատասխանողի ներկայացուցիչներ 1/. Ա. Ստամբոլցյանի
2/. Ա. Սուվարյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Նարինե Մուշեղի Մեսրոպյանի (Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր՝ AN 0637410, տրված 02.09.2013թ.-ին 016-ի կողմից) ընդդեմ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 28.02.2019 թվականի թիվ 32 որոշումն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>

21.03.2019թ.-ին ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (այսուհետ՝ նաև Դատարան) մուտքագրվել է Նարինե Մուշեղի Մեսրոպյանի (այսուհետ՝ նաև Հայցվոր կամ Աշխատող) անունից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի (այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Գործատու)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշումն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը վճարելուն պարտավորեցնելու պահանջներով:

Դատարանի 26.03.2019թ.-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և գործը նախապատրաստվել է դատաքննության:

Դատարանի 26.03.2019թ.-ի մեկ այլ որոշմամբ բավարարվել է Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին, և, որպես հայցի ապահովման միջոց՝ ՀՀ Շիրակի մարզպետին արգելվել է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի մասով երրորդ անձանց հետ կնքել հիմնական աշխատանքային պայմանագիր, կամ կատարել այնպիսի գործողություն, որը հայցը բավարարելու դեպքում կդժվարացնի կամ անհնարին կդարձնի դատական ակտի կատարումը:

Դատարանի 26.03.2019թ.-ի մեկ այլ որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանից պահանջվել են «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին պաշտոնից ազատելու մասին՝ ՀՀ Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշման հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները, նույն որոշման մեջ որպես հիմք վկայակոչված ներքին և անհատական իրավական ակտերը, ինչպես նաև Նարինե Մեսրոպյանի աշխատանքային գործունեությունը կարգավորող պայմանագրերը:

16.04.2019թ.-ին Դատարանում մուտքագրվել են ՀՀ Շիրակի մարզպետի կողմից ներկայացված ապացույցները, ինչպես նաև միջնորդություն՝ հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը երկարաձգելու վերաբերյալ:

Դատարանի 25.04.2019թ.-ի որոշմամբ Պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է, և հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը երկարաձգվել է մինչև 04.05.2019թ.-ը ներառյալ:

06.05.2019թ.-ին Դատարանում մուտքագրվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի անունից ներկայացված պատասխանը՝ հայցադիմումի վերաբերյալ:

Դատարանի 07.05.2019թ.-ի որոշմամբ գործով հրավիրվել է նախնական դատական նիստ:

Դատարանի 23.05.2019թ.-ի արձանագրային որոշմամբ գործով նշանակվել է դատաքննություն:

20.06.2019թ.-ին գործի քննությունը հայտարարվել է ավարտված:

<u>Հայցվորի իրավական դիրքորոշումը</u>

Հայցվոր Նարինե Մոսրոպյանը և նրա ներկայացուցիչ Տիգրան Ղազարյանը (Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 2148), ինչպես հայցադիմումով, այնպես էլ բանավոր՝ գործի քննության ընթացքում, հայցապահանջը հիմնավորել են հետևյալ փաստարկներով.

2017թ.-ի հունվարի 31-ին ՀՀ Շիրակի մարզպետի որոշմամբ՝ 2017թ.-ի փետրվարի 1-ից դադարեցվել են Նարինե Մեսրոպյանի՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ նաև Դպրոց) տնօրենի պաշտոնակատարի լիազորությունները, և նա նշանակվել է «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում: 2017 թվականի փետրվարի 01-ին Գործատուի և Աշխատողի միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2018թ.-ի հուլիսի 27-ին ՀՀ Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Գ. Գրիգորյանի կողմից հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով այն փաստի առթիվ, որ նյութերի նախապատրաստման ընթացքում փաստական տվյալներ են ստացվել, որ Գյումրի քաղաքի մի շարք քաղաքացիներ տարբեր ժամանակահատվածներում, որոշ դեպքերում էլ՝ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում, բացակայել են Հայաստանի

Հանրապետությունից, հետևաբար՝ դասապրոցեսներին չեն մասնակցել, մինչդեռ Դպրոցի տնօրենը, հանդիսանալով պաշտոնատար անձ, շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, և նշված փաստերն արձանագրելու և օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան ընթացք տալու փոխարեն, ուսուցիչների միջոցով, ինչպես նաև անձամբ, Դպրոցի պաշտոնական փաստաթղթերում կեղծ տեղեկություններ է մտցրել բացակայող աշակերտների՝ դասապրոցեսին մասնակցելու կամ ավելի քիչ դասաժամերով բացակայելու վերաբերյալ, ինչի հետևանքով էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին, քանի որ բացակայող աշակերտների թվաքանակով Դպրոցն ստացել է ֆինանսավորում:

2018թ.-ի օգոստոսի 17-ին ՀՀ Շիրակի մարզպետի որոշմամբ Դպրոցի տնօրեն Նարինե Մեսրոպյանը ենթարկվել է կարգապահական տույժի: Նրան հայտարարվել է նկատողություն՝ հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզի դատախազության դատախազ Գ. Գրիգորյանի 2018թ.-ի հուլիսի 27-ի որոշումը՝ քրեական գործ հարուցելու մասին, ինչպես նաև անհիմն համարելով 2018թ.-ի օգոստոսի 10-ին Նարինե Մեսրոպյանի կողմից ներկայացված բացատրությունը:

ՀՀ Շիրակի մարզպետի 2019թ.-ի փետրվարի 28-ի թիվ 32 որոշմամբ լուծվել է Նարինե Մեսրոպյանի հետ 01.02.2017թ.-ին կնքված թիվ 18 աշխատանքային պայմանագիրը, և վերջինս ազատվել է Դպրոցի տնօրենի պաշտոնից՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզի դատախազի 2019թ.-ի փետրվարի 1-ի թիվ 64/22-8-19 միջնորդագիրը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019թ.-ի փետրվարի 11-ի թիվ 01/10/1727-19 առաջարկությունը՝ միևնույն ժամանակ անհիմն համարելով 2019թ.-ի փետրվարի 15-ին Նարինե Մեսրոպյանի կողմից ներկայացված բացատրությունը:

Վկայակոչելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 122-րդ հոդվածի 2-րդ կետը, 222-րդ, 224-րդ, 225-րդ, 227-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասը, Հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, թե ՀՀ Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշումն ամբողջությամբ անհիմն է, այն կայացվել է օրենսդրության պահանջների կոպիտ խախտմամբ և ենթակա է վերացման: Իր պնդումը Հայցվորի ներկայացուցիչը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

1/. Գործատուն միևնույն արարքի համար Աշխատողին ենթարկել է կրկնակի կարգապահական պատասխանատվության. առաջին անգամ՝ 27.07.2018թ.-ին, երկրորդ անգամ՝ 28.02.2019թ.-ին, մինչդեռ աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

2/. Ենթադրյալ խախտման առկայության մասին Գործատուն տեղեկացել է առնվազն 2018 թվականի հուլիսի 27-ին: Աշխատողը կարող էր կարգապահական տույժի ենթարկվել խախտումը հայտնաբերվելու օրվանից 1 /մեկ/ ամսվա ընթացքում, մինչդեռ զբաղեցրած պաշտոնից Նարնե Մեսրոպյանին ազատելու վերաբերյալ՝ Գործատուի որոշումն ընդունվել է 2019 թվականի փետրվարի 28-ին, այսինքն՝ շուրջ 7 /յոթ/ ամիս անց:

3/. Նարինե Մեսրոպյանն աշխատանքից ազատվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, այն է՝ «ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող Աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք», մինչդեռ, ըստ Հայցվորի ներկայացուցչի, իր վստահորդն ուսումնադաստիարակչական գործառույթներ չի իրականացրել, քանի որ նրա վրա նման պարտականություն դրված չի եղել ո՛չ օրենքով, ո՛չ աշխատանքային պայմանագրով:

4/. Նարինե Մեսրոպյանը դարձել է սուբյեկտիվ և խտրական վերաբերմունքի զոհ: Նշված փաստարկը Հայցվորի ներկայացուցիչը հիմնավորել է նրանով, որ ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագրերի հիման վրա Շիրակի մարզի մի շարք դպրոցների տնօրեններ ենթարկվել են ավելի մեղմ կարգապահական տույժերի՝ նկատողությունների կամ խիստ նկատողությունների, մինչդեռ Նարինե Մեսրոպյանի նկատմամբ կիրառվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգապահական տույժերից ամենախիստը, այն էլ՝ օրենդրության նորմերի բազմաթիվ կոպիտ խախտումներով:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ, 37-րդ, 38-րդ, 113-րդ և 265-րդ հոդվածները՝ Հայցվորի ներկայացուցիչը Դատարանին խնդրել է.

- «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից Նարինե Մեսրոպյանին ազատելու մասին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշումը ճանաչել անվավեր,
- վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը, այն է՝ Նարինե Մեսրոպյանին վերականգնել նախկին աշխատանքում՝ «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում,
- Պատասխանողին պարտավորեցնել Նարինե Մեսրոպյանին վճարել միջին ամսեկան աշխատավարձ՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Որպես իր պահանջների հիմնավորում՝ Հայցվորը Դատարանին ներկայացրել է հետևյալ ապացույցները.

- «Նարինե Մեսրոպյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու և աշխատանքային պայմանագիր կնքելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 31.01.2017թ.-ի թիվ 34-Ա որոշման պատճենը,
- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ կնքվող՝ 01.02.2017թ.-ի աշխատանքային թիվ 18 պայմանագիրը,
- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին կարգապահական տույժի ենթարկելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 17.08.2018թ.-ի թիվ 229-Ա որոշման պատճենը,
- ՀՀ Շիրակի մարզի դատախազի 01.02.2019թ.-ի թիվ 64/22-8-19 միջնորդագիրը՝ ««Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և այլ աշխատակիցների աշխատանքում տեղ գտած ապօրինությունների, դրանց պատճառների վերացման ուղղությամբ գործուն միջոցառումներ ձեռնարկելու մասին»,
- Նարինե Մեսրոպյանի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին տրված գրավոր բացատրագրի պատճենը,
- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշման պատճենը,
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղարի 22.05.2019թ.-ի թիվ 04/10/8248-19 պատասխան գրությունը,

- «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի և հաշվապահի կողմից 24.05.2019թ.-ին տրված թիվ 01/750 տեղեկանքը,
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 17.07.2018թ.-ի թիվ 177-Ա որոշման պատճենը,
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 17.08.2018թ.-ի թիվ 230-Ա որոշման պատճենը,
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 19.12.2018թ.-ի թիվ 385-Ա որոշման պատճենը:

<u>Պատասխանողի իրավական դիրքորոշումը</u>

ՀՀ Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչներ Արմեն Ստամբոլցյանը և Անահիտ Սուվարյանն ինչպես հայցադիմումի պատասխանով, այնպես էլ բանավոր՝ գործի քննության ընթացքում, հայցի դեմ առարկել են՝ մասնավորապես հայտնելով հետևյալը.

ՀՀ Շիրակի մարզպետը 2017թ.-ի հունվարի 31-ի թիվ 34-Ա որոշմամբ Նարինե Մեսրոպյանին նշանակել է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում: 2017թ.-ի փետրվարի 01-ին կողմերի միջև կնքվել է թիվ 18 աշխատանքային պայմանագիրը:

2018թ.-ի օգոստոսի 01-ի թիվ 64/1-176քր-18 գրությամբ ՀՀ Շիրակի մարզի դատախազության դատախազ Գ. Գրիգորյանը մարզպետարան է ուղարկել թիվ 18201218 քրեական գործով 27.07.2018թ.-ի որոշումը՝ «Քրեական գործ հարուցելու մասին», համաձայն որի՝ «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության փաստաթղթերում, աշակերտների ցուցակներում և դասամատյաններում, որպես տարբեր դասարանների աշակերտներ՝ գրանցված են թվով 16 /տասնվեց/ անձանց տվյալներ, որոնք սակայն դպրոց չեն հաճախում և չեն մասնակցում դասապրոցեսներին: Նշվածի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնում նախապատրաստված նյութերով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2018թ.-ի օգոստոսի 08-ի թիվ 01/5377-18 գրությամբ, ՀՀ Շիրակի մարզպետը Դպրոցի տնօրեն Նարինե Մեսրոպյանից պահանջել է գրավոր բացատրություն՝ ՀՀ Շիրակի մարզի դատախազության դատախազ Գ. Գրիգորյանի «Քրեական գործ հարուցելու մասին» որոշման մեջ շարադրվածի վերաբերյալ:

Նարինե Մեսրոպյանը 2018թ.-ի օգոստոսի 10-ին գրավոր բացատրություն է տվել այն մասին, որ դատախազի որոշման մեջ նշված թվաքանակով Դպրոցի ստացած ֆինանսավորումը•ծախսվել է ըստ հոդվածների՝ Դպրոցի և սովորողների կարիքների համար, իր կողմից շահադիտական նպատակ չի հետապնդվել:

2018թ.-ի օգոստոսի 17-ին ՀՀ Շիրակի մարզպետի որոշմամբ Դպրոցի տնօրեն Նարինե Մեսրոպյանը ենթարկվել է կարգապահական տույժի: Նրան հայտարարվել է նկատողություն՝ հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզի դատախազության դատախազ Գ. Գրիգորյանի 2018թ.-ի հուլիսի 27-ի որոշումը՝ քրեական գործ հարուցելու մասին, ինչպես նաև ամենայն համարելով 2018թ.-ի օգոստոսի 10-ին Նարինե Մեսրոպյանի կողմից ներկայացված բացատրությունը:

2019թ.-ի փետրվարի 01-ին ՀՀ Շիրակի մարզպետարանում ստացվել է ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագիրը՝ ««Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և այլ աշխատակիցների աշխատանքում տեղ գտած ապօրինությունների, դրանց պատճառների վերացման ուղղությամբ գործուն

միջոցառումներ ձեռնարկելու մասին», որով տեղեկացվել է, որ 2018թ.-ի հոկտեմբերի 30-ին Նարինե Մեսրոպյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով և 179-րդ հոդվածի 1-ին մասով: 2018 թվականի դեկտեմբերի 10-ին Նարինե Մեսրոպյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է: Առաջադրված մեղադրանքում Նարինե Մեսրոպյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել, ընդունել է մեղքը և զղջացել է կատարածի համար: Քննությամբ հիմնավորված է համարվել, որ Դպրոցի թվով 26 ուսուցիչներ և 2 փոխտնօրեններ, Հայաստանի Հանրապետությունից բացակայած և տնական ժամանակ դասերին չհաճախած աշակերտներին գնահատական նշանակելով և բացակա չդնելով, իսկ փոխտնօրեն Անահիտ Միսկարյանը՝ նաև դպրոցի ուսուցիչներին բացակա աշակերտներին բացակա չդնելու և գնահատելու մասին հանձնարարականներով օժանդակել են տնօրեն Նարինե Մեսրոպյանին: Քրեական գործի նախաքննությամբ պարզվել է նաև, որ նշված ուսուցիչներին այդպիսի արարքի կատարմանը հարկադրել են տնօրեն Ն. Մեսրոպյանը և փոխտնօրեն Ա. Միսկարյանը, իսկ դպրոցի ուսուցիչներն այդ քայլին գնացել են տնօրենին դեմ չգնալու և աշխատանքը կորցնելու մտավախությունից ելնելով:

2019 թվականի որոշմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի հիմքով:

ՀՀ Շիրակի մարզի դատախազի 2019թ.-ի փետրվարի 1-ի թիվ 64/22-8-19 միջնորդագիրը դիտարկելով որպես աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմք, Նարինե Մեսրոպյանի հետ 01.03.2017թ.-ին կնքված թիվ 18 աշխատանքային պայմանագիրը ՀՀ Շիրակի մարզպետի 2019թ.-ի փետրվարի 28-ի թիվ 32 որոշմամբ լուծվել է, և Նարինե Մեսրոպյանն ազատվել է Դպրոցի տնօրենի պաշտոնից:

Վկայակոչելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 68-րդ կետը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածը, Պատասխանողի ներկայացուցիչները Դատարանին խնդրել են Նարինե Մեսրոպյանի հայցը մերժել ամբողջությամբ:

Որպես առարկությունների հիմնավորում՝ Դատարանին ներկայացրել են հետևյալ ապացույցները.

- «Նարինե Մեսրոպյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու և աշխատանքային պայմանագիր կնքելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 31.01.2017թ.-ի թիվ 34-Ա որոշման վավերացված պատճենը,
- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ կնքվող՝ 01.02.2017թ.-ի աշխատանքային թիվ 18 պայմանագրի վավերացված պատճենը,
- ՀՀ Շիրակի մարզի դատախազի 01.02.2019թ.-ի թիվ 64/22-8-19 միջնորդագիրը՝ ««Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և այլ աշխատակիցների աշխատանքում տեղ գտած ապօրինությունների, դրանց պատճառների վերացման ուղղությամբ գործուն միջոցառումներ ձեռնարկելու մասին»,
- Նարինե Մեսրոպյանի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին տրված գրավոր բացատրագրի պատճենը,

- ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019թ.-ի փետրվարի 11-ի թիվ 01/10/1727-19 գրության վավերացված պատճենը:

<u>Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

Դատարանը գտնում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1/. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի /Գործատու/ և Նարինե Մեսրոպյանի /Աշխատող/ միջև 2017թ.-ի փետրվարի 01-ին կնքվել է աշխատանքային պայմանագիր /այսուհետ՝ նաև Պայմանագիր/՝ 5 /հինգ/ տարի ժամկետով, որով «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը հանձնվել է Նարինե Մեսրոպյանին: Նարինե Մեսրոպյանը պարտավորվել է Դպրոցի գործադիր մարմնի գործառույթները կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին, «Կրթության մասին» ՀՀ օրենքին, այլ իրավական ակտերին, Դպրոցի կանոնադրությանը, Պայմանագրին համապատասխան՝ ի շահ կազմակերպության, պատշաճ մակարդակով իրականացնել կազմակերպության ընթացիկ ղեկավարումը՝ կազմակերպության կանոնադրությանը և Պայմանագրին համապատասխան */հիմք՝ <Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ կնքվող»՝ 01.02.2017թ.-ի աշխատանքային թիվ 18 պայմանագիրը/:*

2/. 17.08.2018թ.-ին Նարինե Մեսրոպյանը ենթարկվել է կարգապահական տույժի: Նրան հայտարարվել է նկատողություն՝ հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզի դատախազության դատախազ Գ. Գրիգորյանի 2018թ.-ի հուլիսի 27-ի որոշումը՝ «Քրեական գործ հարուցելու մասին», ինչպես նաև այն բանի համար, որ նա խախտել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 21-րդ ենթակետը, այն է՝ չի կատարել կամ պատշաճ կերպով չի կատարել օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված մարմնի և խորհրդի որոշումները, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրի պահանջները: Նարինե Մեսրոպյանի բացատրությունը համարվել է անհիմն */հիմք՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին կարգապահական տույժի ենթարկելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 17.08.2018թ.-ի թիվ 229-Ա որոշումը/:*

3/. Նույն խախտման համար Նարինե Մեսրոպյանը կարգապահական պատասխանատվության ենթարկվել է երկրորդ ամգամ՝ խախտման հայտնաբերման պահից, շուրջ 7 /յոթ/ ամիս հետո: Նույն խախտման համար կրկին անգամ կարգապահական տույժ կիրառելիս՝ Գործատուն հաշվի է առել ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագիրը և ՀՀ կրթության և գիտության նախարարի առաջարկությունը */հիմք՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշումը/:*

4/. Նարինե Մեսրոպյանն ուսումնադաստիարակչական գործառույթներ չի իրականացրել ո՛չ աշխատանքային պայմանագրով, ո՛չ Դպրոցի կանոնադրությամբ, ո՛չ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ, ո՛չ փաստացի, սակայն զբաղեցրած պաշտոնից ազատվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 122-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքերով */հիմք՝ գործի նյութերը, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշումը/:*

5/. Նույն իրավական հիմքերով, և նույնպես ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագրերի հավառմամբ՝ ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը, ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Գ. Սարյանի անվան թիվ 24 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի «Փոքր Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը ենթարկվել են համապատասխանաբար «խիստ նկատողություն», «նկատողություն» և «խիստ նկատողություն» տեսակների կարգապահական տույժերի */հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի՝ համապատասխանաբար 17.07.2018թ.-ի թիվ 177-Ա որոշումը, 17.08.2018թ.-ի թիվ 230-Ա որոշումը, 19.12.2018թ.-ի թիվ 385-Ա որոշումը/:*

6/. «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում Նարինե Մուշեղի Մեսրոպյանի ամսեկան միջին աշխատավարձը կազմել է 245000 /երկու հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ */հիմք՝ «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի և հաշվապահի կողմից 24.05.2019թ.-ին տրված թիվ 01/750 տեղեկանքը/:*

<u>Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>

Լսելով կողմերին, վերլուծելով և գնահատելով գործի տվյալներն ու հետազոտված ապացույցները, Դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր է, այն ենթակա է բավարարման ամբողջությամբ՝ քննությամբ հաստատված հետևյալ փաստական հանգամանքների և դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի հիման վրա.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167 -րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է հայցի առարկան, հայցի փաստական և իրավական հիմքերը, պարզում է պատասխանողի առարկությունների փաստական և իրավական հիմքերը, (...) պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը, այդ թվում՝ կիրառելի իրավական նորմերը՝ չսահմանափակվելով գործին մասնակցող անձանց մատնանշած իրավական նորմերով, (...), գործին մասնակցող անձանց հետ քննարկում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, գործին մասնակցող անձանց հետ քննարկում է ապացուցման պարտականությունը նրանց միջև բաշխելու հարցը (...):

Սույն գործով հրավիրված նախնական դատական նիստերի ընթացքում Դատարանը պարզել է հայցի առարկան և հիմքը և արձանագրել, որ հայցի առարկան է հանդիսանում Գործատուի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշումն անվավեր ճանաչելը, նախկին աշխատանքում վերականգնելը, ինչպես նաև հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելը: Դատարանը փաստում է նաև, որ նախկին աշխատանքում վերականգնելու

և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելն ըստ էության հանդիսանում են ածանցյալ պահանջներ, ուստի անհրաժեշտ է նախ պարզել հիմնական, այն է՝ Գործատուի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի հիմնավորվածության հարցը:

Որպես հայցի փաստական հիմքեր՝ հայցվոր կողմը վկայակոչել է ներքոհիշյալները.

- Գործատուն միևնույն արարքի համար Աշխատողին ենթարկել է կրկնակի կարգապահական պատասխանատվության, մինչդեռ աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

- Աշխատողը կարող էր կարգապահական տույժի ենթարկվել խախտումը հայտնաբերվելու օրվանից 1 /մեկ/ ամսվա ընթացքում, մինչդեռ զբաղեցրած պաշտոնից Նարնե Մեսրոպյանին ազատելու վերաբերյալ՝ Գործատուի որոշումն ընդունվել է շուրջ 7 /յոթ/ ամիս անց:

- Նարինե Մեսրոպյանն աշխատանքից ազատվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, այն է՝ «ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք», մինչդեռ Նարինե Մեսրոպյանն ուսումնադաստիարակչական գործառույթներ չի իրականացրել, քանի որ նման պարտականություն նրա վրա դրված չի եղել ո՛չ օրենքով, ո՛չ աշխատանքային պայմանագրով:

- ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագրերի հիման վրա Շիրակի մարզի մի շարք դպրոցների տնօրեններ ենթարկվել են ավելի մեղմ կարգապահական տույժերի՝ նկատողությունների կամ խիստ նկատողությունների, մինչդեռ Նարինե Մեսրոպյանի նկատմամբ կիրառվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգապահական տույժերից ամենախիստը, այն էլ՝ օրենդրության նորմերի բազմաթիվ կոպիտ խախտումներով:

Որպես պահանջի իրավական հիմք՝ հայցվոր կողմը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ, 37-րդ, 38-րդ, 113-րդ և 265-րդ հոդվածները:

Որպես իր առարկությունների փաստական հիմք՝ պատասխանող կողմը նշել է հետևյալը.

- Գործատուն կորցրել է Աշխատողի հանդեպ վստահությունը՝ հաշվի առնելով ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագիրը և ՀՀ կրթության և գիտության նախարարի առաջարկությունը,

- Աշխատողը խախտել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետը:

Որպես առարկությունների իրավական հիմնավորում՝ Պատասխանողի ներկայացուցիչները վկայակոչել են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 68-րդ կետը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածը:

և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելն ըստ էության հանդիսանում են ածանցյալ պահանջներ, ուստի անհրաժեշտ է նախ պարզել հիմնական, այն է՝ Գործատուի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի հիմնավորվածության հարցը:

Որպես հայցի փաստական հիմքեր՝ հայցվոր կողմը վկայակոչել է ներքոհիշյալները.

- Գործատուն միևնույն արարքի համար Աշխատողին ենթարկել է կրկնակի կարգապահական պատասխանատվության, մինչդեռ աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

- Աշխատողը կարող էր կարգապահական տույժի ենթարկվել խախտումը հայտնաբերվելու օրվանից 1 /մեկ/ ամսվա ընթացքում, մինչդեռ զբաղեցրած պաշտոնից Նարնե Մեսրոպյանին ազատելու վերաբերյալ՝ Գործատուի որոշումն ընդունվել է շուրջ 7 /յոթ/ ամիս անց:

- Նարինե Մեսրոպյանն աշխատանքից ազատվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, այն է՝ «ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք», մինչդեռ Նարինե Մեսրոպյանն ուսումնադաստիարակչական գործառույթներ չի իրականացրել, քանի որ նման պարտականություն նրա վրա դրված չի եղել ո՛չ օրենքով, ո՛չ աշխատանքային պայմանագրով:

- ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագրերի հիման վրա Շիրակի մարզի մի շարք դպրոցների տնօրեններ ենթարկվել են ավելի մեղմ կարգապահական տույժերի՝ նկատողությունների կամ խիստ նկատողությունների, մինչդեռ Նարինե Մեսրոպյանի նկատմամբ կիրառվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգապահական տույժերից ամենախիստը, այն էլ՝ օրենդրության նորմերի բազմաթիվ կոպիտ խախտումներով:

Որպես պահանջի իրավական հիմք՝ հայցվոր կողմը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ, 37-րդ, 38-րդ, 113-րդ և 265-րդ հոդվածները:

Որպես իր առարկությունների փաստական հիմք՝ պատասխանող կողմը նշել է հետևյալը.

- Գործատուն կորցրել է Աշխատողի հանդեպ վստահությունը՝ հաշվի առնելով ՀՀ Շիրակի մարզի դպտախազի միջնորդագիրը և ՀՀ կրթության և գիտության նախարարի առաջարկությունը,

- Աշխատողը խախտել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետը:

Որպես առարկությունների իրավական հիմնավորում՝ Պատասխանողի ներկայացուցիչները վկայակոչել են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 68-րդ կետը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով:

ՀՀ վճռաբեկ դատարանն /այսուհետ՝ նաև Վճռաբեկ դատարան/ իր որոշումներով բազմիցս է անդրադարձել գործի քննության արդյունավետությունն ապահովելու՝ Դատարանի պարտականությանը: Վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է, որ գործի քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացնելիս դատարանը պարտավոր է կողմերի հետ քննարկել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխել ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելն անմիջական կախվածության մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերից և դրանց վերաբերյալ՝ մյուս կողմի ներկայացրած առարկություններից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: Այսինքն՝ դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողությունները պետք է ուղղված լինեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմերի կիրառմանը:

Այսպես, լսելով գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները, գործը քննելով բացառապես հայցի առարկայի շրջանակներում, Դատարանը գտել է, որ սույն վեճը ճիշտ և արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

- արդյո՞ք գործատուն իրավունք ուներ միևնույն արարքի համար աշխատողին ենթարկելու կրկնակի կարգապահական տույժի,
- արդյո՞ք աշխատողը կարող էր կարգապահական տույժի ենթարկվել խախտումը հայտնաբերվելու օրվանից շուրջ 7 /յոթ/ ամիս անց,
- արդյո՞ք աշխատողն իրականացրել է ուսումնադաստիարակչական գործառույթներ,
- արդյո՞ք օրենքներով կամ նորմատիվ այլ իրավական ակտերով սահմանված են աշխատանքային պայմանագիրը միակողմանիորեն լուծելու այնպիսի հիմքերը, ինչպիսիք են դատախազի միջնորդագիրը կամ նախարարի առաջարկությունը:

Ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելու հետևանքով Դատարանը որոշել է վերը նշված փաստերի ապացուցման բեռը դնել պատասխանող կողմի վրա՝ հիմք

ընդունելով *ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, համաձայն որի՝ վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած, ինչպես նաև տվյալ անհատական իրավական ակտի ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:*

Այսպես.

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ կնքվող՝ 01.02.2017թ.-ի աշխատանքային թիվ 18 պայմանագրի հետազոտման արդյունքում Դատարանը հաստատված է համարում հետևյալը. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի /Գործատու/ և Նարինե Մեսրոպյանի /Աշխատող/ միջև 2017թ.-ի փետրվարի 01-ին կնքվել է աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով, որով «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը հանձնվել է Նարինե Մեսրոպյանին: Նարինե Մեսրոպյանը պարտավորվել է Դպրոցի գործադիր մարմնի գործառույթները կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին, «Կրթության մասին» ՀՀ օրենքին, այլ իրավական ակտերին, Դպրոցի կանոնադրությանը, Պայմանագրին համապատասխան՝ ի շահ կազմակերպության, պատշաճ մակարդակով իրականացնել կազմակերպության ընթացիկ ղեկավարումը՝ կազմակերպության կանոնադրությանը և Պայմանագրին համապատասխան:

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին կարգապահական տույժի ենթարկելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 17.08.2018թ.-ի թիվ 229-Ա որոշման հետազոտման արդյունքում Դատարանը հաստատված է համարում հետևյալը. 17.08.2018թ.-ին Նարինե Մեսրոպյանը ենթարկվել է կարգապահական տույժի: Նրան հայտարարվել է նկատողություն՝ հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզի դատախազության դատախազ Գ. Գրիգորյանի 2018թ.-ի հուլիսի 27-ի որոշումը՝ «Քրեական գործ հարուցելու մասին», ինչպես նաև այն բանի համար, որ նա խախտել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 21-րդ ենթակետը, այն է՝ չի կատարել կամ պատշաճ կերպով չի կատարել օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված մարմնի և խորհրդի որոշումները, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրի պահանջները: Նարինե Մեսրոպյանի բացատրությունը համարվել է անհիմն:

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշման հետազոտման արդյունքում Դատարանը հաստատված է համարում հետևյալը. նույն խախտման համար Նարինե Մեսրոպյանը կարգապահական պատասխանատվության ենթարկվել է երկրորդ ամգամ՝ խախտման հայտնաբերման պահից շուրջ 7 /յոթ/ ամիս հետո: Նույն խախտման համար կրկին անգամ կարգապահական տույժ կիրառելիս՝ Գործատուն հաշվի է առել ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագիրը և ՀՀ կրթության և գիտության նախարարի առաջարկությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք:

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշման բովանդակությունից պարզ է դառնում, որ Պայմանագիրը լուծվել է (Աշխատողն զբաղեցրած պաշտոնից ազատվել է) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 122-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքերով, մինչդեռ ո՛չ աշխատանքային պայմանագրով, ո՛չ Դպրոցի կանոնադրությամբ, ո՛չ ղեկավարող օրենսդրությամբ, ո՛չ փաստացի Նարինե Մեսրոպյանն ուսումնադաստիարակչական գործառույթներ չի իրականացրել:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ վիճարկվող անհատական իրավական ակտն ընդունվել է մեկից ավելի փաստական հիմքերով, ապա դրանցից առնվազն մեկի առկայությունը հաստատվելը բավարար է վիճարկվող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու համար:

Նշված իրավանորմի տրամաբանությունը հետևյալն է. աշխատանքային վեճեր քննելիս՝ դատարանը պարտավոր է քննության արժանացնել վիճարկվող անհատական իրավական ակտի ընդունման փաստական բոլոր հիմքերը, քանի որ դրանցից որևէ մեկի առկայությունն էլ բավարար է՝ վիճարկվող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու համար:

Հետևաբար՝ վեճը լուծելու համար անհրաժեշտ է բազմակողմանի քննության արժանացնել վիճարկվող որոշման փաստական բոլոր հիմքերը:

Այսպիսով, Դատարանը փաստում է, որ ո՛չ աշխատանքային պայմանագրով, ո՛չ Դպրոցի կանոնադրությամբ, ո՛չ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ, Դպրոցի տնօրեն Նարինե Մեսրոպյանի վրա ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնելու պարտականություն դրված չի եղել: Բացի այդ, պատասխանող կողմը չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհաստատվեր այն հանգամանքը, որ թեև ոչ օրենքով կամ պայմանագրով, սակայն փաստացի Նարինե Մեսրոպյանն այնուամենայնիվ իրականացրել է ուսումնադաստիարակչական գործառույթներ:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ Նարինե Մեսրոպնանը չի հանդիսացել այն սուբյեկտը, որի նկատմամբ կարգապահական տույժը կարող էր կիրառվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 122-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքերով, հետևաբար, Աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը վերը նշված հիմքով լուծելն օրենսդրության պահանջներից չի բխել:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ որպես վիճարկվող որոշման հիմնավորում՝ Գործատուն հաշվի է առել ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագիրը և ՀՀ կրթության և գիտության նախարարի առաջարկությունը, ապա Դատարանը փաստում է, որ որևէ օրենքով կամ նորմատիվ այլ իրավական ակտով սահմանված չեն աշխատանքային պայմանագիրը միակողմանիորեն լուծելու այնպիսի հիմքեր, ինչպիսիք են դատախազի միջնորդագիրը կամ նախարարի առաջարկությունը:

Նման պայմաններում, քննության առարկա չդարձնելով դատախազի կողմից ներկայացված միջնորդագրի և նախարարի կողմից ներկայացված առաջարկության իրավաչափության հարցը, Դատարանը գտնում է, որ դրանց հաշվառմամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ Գործատուի որոշումն ամեն դեպքում օրենքից չի բխում:

Բացի այդ, ինչպես նշվեց վերևում, թե՛ Նարինե Մեսրոպյանին կարգապահական տույժի ենթարկելու մասին՝ ՀՀ Շիրակի մարզպետի 17.08.2018թ.-ի թիվ 229-Ա որոշման, թե՛ Նարինե Մեսրոպյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշման հիմքերում դրվել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը, այն է՝ աշխատողը չի կատարել կամ պատշաճ կերպով չի կատարել օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված մարմնի և խորհրդի որոշումները, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրի պահանջները, ինչը նշանակում է, որ երկու դեպքերում էլ կարգապահական տույժերը կիրառվել են միևնույն արարքի համար, ինչը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 225-րդ հոդվածի տրամաբանությամբ, անթույլատրելի է:

Հատկանշական է, որ 17.08.2018թ.-ի թիվ 229-Ա որոշմամբ Նարինե Մեսրոպյանին նկատողություն հայտարարելուն նպաստել է նաև այն հանգամանքը, որ վերջինիս կողմից ներկայացված բացատրությունը համարվել է անհիմն: Այսինքն, Գործատուն, հիմք ընդունելով «Քրեական գործ հարուցելու մասին»՝ ՀՀ Շիրակի մարզի դատախազության դատախազ Գ. Գրիգորյանի 27.07.2018թ.-ի որոշումը, անմեղության կանխավարկածի խախտմամբ՝ առանց օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության, դատախազի որոշմամբ շարադրված փաստերն ընդունել է որպես բացարձակ ճշմարտություն (հակառակ դեպքում կարգապահական տույժ չէր կիրառի), սակայն վստահությունն Աշխատողի նկատմամբ այնուամենայնիվ չի կորցրել: Նման պայմաններում, քննության առարկա չդարձնելով այն հարցը, թե արդյո՞ք Նարինե Մեսրոպյանը կատարել է այնպիսի արարք, որը հիմք էր ծառայել նրան կարգապահական տույժի ենթարկելու համար,

Դատարանն այնուամենայնիվ փաստում է, որ անգամ Աշխատողին վերագրվող խախտման առկայության վերաբերյալ համոզմունք ունենալու պայմաններում՝ օրենքով նախատեսված կարգապահական տույժերից ամենախիստը կիրառելու՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու իր իրավասությունից Գործատուն չի օգտվել, բավարար համարելով նկատողություն հայտարարելը: Նման պայմաններում ակնհայտ է դառնում, որ ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագրում շարադրված փաստերի մասով Գործատուն իր համար որևէ նոր հանգամանք չի բացահայտել, ինչը նշանակում է, որ նաև իր ընկալմամբ՝ նույն խախտման համար, Գործատուն Աշխատողին կարգապահական տույժի է ենթարկել երկրորդ անգամ, ինչն օրենքից չի բխում:

Բացի այդ, **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի՝ համապատասխանաբար 17.07.2018թ.-ի թիվ 177-Ա, 17.08.2018թ.-ի թիվ 230-Ա և 19.12.2018թ.-ի թիվ 385-Ա որոշումների համալիր հետազոտման արդյունքում Դատարանը փաստում է հետևյալը.** նույն իրավական հիմքերով, և նույնպես ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդագրերի հավառմամբ՝ ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը, ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Գ. Սարյանի անվան թիվ 24 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը և ՀՀ Շիրակի մարզի «Փոքր Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը ենթարկվել են համապատասխանաբար «խիստ նկատողություն», «նկատողություն» և «խիստ նկատողություն» տեսակների կարգապահական տույժերի, հանգամանք, որն անուղղակիորեն վկայում է այն մասին, որ Հայցվորի ներկայացուցչի պնդումն առ այն, թե իր վստահորդի նկատմամբ դրսևորվել է սուբյեկտիվ և խտրական վերաբերմունք, հիմնազուրկ չէ:

Այսպիսով, բազմակողմանիորեն հետազոտելով և օբյեկտիվորեն գնահատելով գործում առկա բոլոր ապացույցները, համադրելով դրանք վերը շարադրված և վերլուծված իրավական նորմերի, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների հետ, Դատարանը հանգում է հետևյալին.

- Գործատուն միևնույն արարքի համար Աշխատողին ենթարկել է կրկնակի կարգապահական պատասխանատվության, ինչի իրավունքը չի ունեցել:
- Աշխատողը զբաղեցրած պաշտոնից ազատվել է խախտումը հայտնաբերվելու օրվանից շուրջ 7 /յոթ/ ամիս անց, ինչն օրենսդրության պահանջներից չի բխում:
- Աշխատողն ուսումնադաստիարակչական գործառույթներ չի իրականացրել, հետևաբար՝ նման գործառույթների իրականացնելու հետ անհամատեղելի արարք կատարած լինելու հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելն օրենսդրության պահանջներից չի բխել:
- Որևէ օրենքով կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված չեն աշխատանքային պայմանագիրը միակողմանիորեն լուծելու այնպիսի հիմքեր, ինչպիսիք են դատախազի միջնորդագիրը կամ նախարարի առաջարկությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է արտանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի

օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Վերոգրյալի հիման վրա պարզ է դառնում, որ վիճարկվող անհատական իրավական ակտը՝ ՀՀ Շիրակի մարզպետի 28.02.2019թ.-ի թիվ 32 որոշումը, կայացվել է առանց օրինական հիմքերի, հետևաբար՝ Նարինե Մեսրոպյանի խախտված իրավունքները ենթակա են վերականգնման ամբողջ ծավալով:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ հայցապահանջը հիմնավոր է, այն բխում է օրենքից և գործի նյութերից, հետևաբար՝ ենթակա է բավարարման ամբողջությամբ:

«Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի և հաշվապահի կողմից 24.05.2019թ.-ին տրված թիվ 01/750 տեղեկանքի հետազոտման արդյունքում Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում Նարինե Մուշեղի Մեսրոպյանի ամսեկան միջին աշխատավարձը կազմել է 245000 /երկու հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ հարկադիր պարապուրդի գումարը ենթակա է բռնագանձման հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակատվածի համար՝ ամսեկան միջինը 245000 /երկու հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամի հաշվարկով:

<u>Դատական ծախսեր</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորն օրենքով ազատված է պետական տուրքի վճարումից, կամ դատարանը կիրառել է նման արտոնություն, ապա պետական տուրքը դատական ակտով բռնագանձվում է պետական տուրքի վճարումից չազատված գործին մասնակցող մյուս անձից՝ բավարարված պահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններին տրվող գույքային պահանջով հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններին տրվող ոչ գույքային պահանջով հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է բազային տուրքի քառապատիկի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցվորն օրենքի ուժով ազատված է եղել հայցադիմումը դատարան երկայացնելու համար պետական տուրքի վճարումից, ինչպես

նաև այն, որ հայցը ենթակա է բավարարման ամբողջությամբ, Դատարանը գտնում է, որ պետական տուրքն անհրաժեշտ է բռնագանձել Պատասխանողից:

Տվյալ դեպքում ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ՝ որպես ոչ գույքային հիմնական պահանջի մասով վճարման ենթակա պետական տուրքի գումար, ինչպես նաև հաշվարկվելիք և բռնագանձման ենթակա հարկադիր պարապուրդի ամբողջ գումարի 2%-ի չափով պետական տուրք:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ և 198-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել ամբողջությամբ:

1/. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 32 որոշումը ճանաչել անվավեր:

2/. Նարինե Մուշեղի Մեսրոպյանին վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:

3/. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին պարտավորեցնել Նարինե Մուշեղի Մեսրոպյանին վճարել հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի ամբողջ գումարը՝ ամսեկան միջինը 245000 /երկու հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամի հաշվարկով:

4/. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ՝ որպես ոչ գույքային պահանջի մասով վճարման ենթակա պետական տուրքի գումար:

5/. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե բռնագանձել պետական տուրք՝ հաշվարկվելիք և բռնագանձման ենթակա հարկադիր պարապուրդի ամբողջ գումարի 2 /երկու/ տոկոսի չափով:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Դատարանի 26.03.2019թ.-ի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի մասով երրորդ անձանց հետ հիմնական աշխատանքային պայմանագիր կնքելու կամ դատական ակտի կատարումը դժվարացնող կամ անհնարին դարձնող գործողություններ կատարելու արգելքը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, այնուհետև՝ վերացնել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում վճիռը կարող է կատարվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ 22.01.2020թ.
Դատավոր՝ Հ. Ղազարյան